REPUBLIC OF ARMENIA
Ministry of Territorial Administration and Infrastructure
Closed Joint - Stock Company
"Armenian scientific – Research Institute for Nuclear Power Plant operation"
"ARMATOM"

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Министерство территориального управления и инфраструктур
Закрытое акционерное общество
"Армянский научно-исследовательский институт по эксплуатации атомных электростанций"
«АРМАТОМ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
«Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ»
Փակ բաժնետիրական ընկերություն
«ՀԱՅԱՏՈՄ»

29.03.2024թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի №489-Ա, առ 15.03.2024թ. հրամանի, գործուղվել եմ ք. Սոչի (Ռուսաստանի Դաշնություն)՝ ս. թ. մարտի 24-ից 26-ը «ԱՏՈՄԷՔՍՊՈ-2024» 13-րդ միջազգային ֆորումի (այսուհետ՝ ֆորում) աշխատանքներին մասնակցելու համար:

Ֆորումի աշխատանքներին մասնակցում էին Հունգարիայի, Սերբիայի, Բելառուսի, Չինաստանի, Հնդկաստանի, Բանգլադեշի, Ինդոնեզիայի, Պակիստանի, Եգիպտոսի, Թուրքիայի, Հարավային Աֆրիկայի, Հորդանանի, Իրանի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Կիրգիզիայի ատոմային էներգիայի բնագավառի ներկայացուցիչներ:

ՀՀ պատվիրակությունը բաղկացած էր 6 հոգուց՝ Հայաստանի Հանրապետության երեք կազմակերպություններից՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, «ՀԱԷԿ» ՓԲԸ, «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ:

Մասնակցել եմ ֆորումի բացման արարողությանը, որն իրականացրեց ՌԴ «ՌՈՍԱՏՈՄ» ՊԿ Գլխավոր տնօրեն պարոն Ա. Ե. Լիխաչովը:

Ֆորումի մասնակիցներին, առցանց ռեժիմով, ողջունեց նաև ԱԷՄԳ Գլխավոր տնօրեն պրն. Ռաֆայել Գրոսսին:

ՀՀ պատվիրակության կազմով մասնակցեցինք նաև «Մաքուր էներգետիկա» լիագումար նիստին, որի բացմանը հնչեցվեցին ՌԴ Նախագահ Վ.Վ. Պուտինի և ՌԴ Վարչապետ Մ. Վ. Միշուստինի ուղերձները:

Լիագումար նիստի նախագահական կազմում ընդգրկված էին «ՌՈՍԱՏՈՄ» ՊԿ գլխավոր տնօրեն Ալեկսեյ Լիխաչովը, Հունգարիայի արտաքին տնտեսական կապերի

նախարար Պիտռ Սիյառտոն, Սերբիայի առողջապահության նախարար Դանիցա Գռուիչիչը, Բելառուսի էներգետիկայի նախարար Վիկտոր Կարանկևիչը, Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ալպառսլան Բայրակթարը, ԱԷՄԳ-ն Գլխավոր տնօրենի տեղակալ Միխաիլ Չուդակովը, Ղազախստանի «ՂԱԶԱՏՈՄՊՌՈՄ» ազգային ատոմային ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Մեիրուժան Յուսուպովը, ՌԴ Նախագահի հատուկ բանագնաց Դմիտրի Պեսկովը և այլն:

Ելույթ ունեցան նախագահությունում գտնվող բոլոր ներկայացուցիչները, որոնք ներկայացրեցրին իրենց երկրներում ատոմային էներգիայի ոլորտում տարվող աշխատանքները, բժշկության մեջ օգտագործվող նոր իզոտոպերի ստացման, մաքուր էներգետիկային վերաբերվող տարբեր խնդիրների մասին:

Ֆորումի ընթացքում ՀՀ պատվիրակության կազմով հանդիպումներ ենք ունեցել ՌԴ «ՌՈՍԷՆԵՐԳՈԱՏՈՄ» և «ՌՈՒՍԱՏՈՄ ՍԵՐՎԻՍ» կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ուր քննարկել ենք ՀԱԷԿ գործող էներգաբլոկի երկրորդ անգամ շահագործման ժամկետի երկարացման հետ կապված խնդիրները: Հանդիպումների վերջնարդյունքում ստորագրվեց պայմանագիր՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ՌՈՒՍԱՏՈՄ ՍԵՐՎԻՍ» կազմակերպության միջև, նշված ուղղութամբ սահմանափակ թվով աշխատանքների կատարման համար:

Հաջորդ հանդիպումը եղել է ՌԴ «Русатом Энерджи Проджектс» (РЭП) կազմակերպության ներկայացուցիչների հետ, ուր քննարկել ենք ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման հետ կապված հարցերը: ՌԴ « РЭП» կազմակերպությանը ներկայացրել եմ այն աշխատանքների ցանկը, որոնք կարող են կատարվել «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ կողմից՝ ռուսական նախագծով ԱԷԿ-ում:

Ֆորումի ընթացքում մասնակցել եմ փոքր մոդուլյար ռեակտորով միջուկային էներգաբլոկների և հետազոտական ռեակտորով տեղակայանքներին նվիրված քննարկումներին, ուր ՌԴ, Չինաստանի, Հնդկաստանի կողմից ներկայացվեցին իրենց երկրներում շահագործվող և նախագծման գործընթացում գտնվող միջուկային տեղակայանքների մասին:

Մասնակցել եմ նաև «Ռադիոակտիվ թափոնների մշակմանն ու պահպանմանը» նվիրված տեխնիկական հանդիպմանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ք. Երեւան, Ծովակալ Իսակովի պող. 50/12
0004 г. Ереван, пр. Адмирала Исакова, 50/12
50/12 Admiral Isakov ave., Yerevan
Phone: (37410) 74-21-30
Fax: (37410) 73-46-10
E-mail: armatom@ armatom.am